1908). Եպիսկոպոսանալու համար կ'ուղևորի Ս. Էջմիածին, բայց կը հիւանդանայ և կը վախճանի Երևանի մէջ 1910ին։

ԵԶՆԻԿ ԵՊՍ. ԱՊԱՀՈՒՆԻ, ՊՈԼՍԵՑԻ.— Ծ. 1843ին. աշկ. Նուպար Շահնազարեան վարժ.ի. Զռ. 1868ին, վարած է զանազան պաշտօններ. քաղ. դէպքերու հետևանքով կը տարագրուի Երուսաղէմ 1891ին և կը մնայ մինչև 1895։ Ներուսմով կը վերադառնայ Պոլիս. յետոյ կ'անցնի Եգիպտոս եւ հրամանաւ կթղ. Խրիմեան Հայրիկի, կ'երթայ Կովկաս եւ Պարսկաստան. 1907ին պաշտօնով կը մեկնի Ամերիկա, ուրկէ քիչ յետոյ 1908ին կը վերադառնայ Պոլիս, եւ կը վախճանի 1913ին։

ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՆԵՐԿԱՐԱՐԵԱՆ, ՎԱՆՑԻ.—Մբ. Աղթամարի, Ծ. 1864ին. Զռ. 1888ին. Աղթամարի, Վանայ, Բաղէշի թեմերուն մէջ վարած է առ. պաշտօններ. կթղ. Տեղապահ Աղթամարի (1910-13). Վանայ դաղթականութեան հետ կ'ուղեւորի Կովկաս 1915ին, Ս. Էջմիածին 1918ին։ Պուլկարիա եւ Եգիպտոս ալ մնալէ յետոյ՝ կ'ապաստանի Ս. Յակոբի վանքը 1924ին. կը վախճանի Ս. Յակոբի մէջ 1926ին։

ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՏԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.—Մբ. Ծ. 1862ին, աշկ. ժառ. վարժ.ի. Զռ. 1889ին, ՏԴ. (1893-94), ՏԲ. (1894-97), ՏՑՊ. 1898ին, Առ. Էնկիւրիի (1901), Տրապիզոնի (1902-904)։ Տարագրութեամբ կը վերադառնայ Ս. Յակոբի վանքը 1916ին։ Զինադադարին կը մեկնի Եգիպտոս և հոնկէ ալ Պոլիս. քարոզիչ Ս. Կարապետի Սկիւտար (1920—26). այժմ դադրած է Միաբանութենէ։

ԵՂԻԱ ԵՊՍ. ԲԵԹՂԵՀԷՄԻ.— Մբ. 1666ին եպս. կը ձեռնադրուի Եղիազար կթղ.էն Ս. Յակոբի մէջ, Մինաս և Պօղոս վարդապետներուն հետ. Նշ. Հռովմի, Սպանիոյ 1690-99. Նշ. Թէքիրտաղի. 1700ին. ՏԲ. 1702ին (Օրագրութիւն Մինաս Ամդեցիի)։ Եղիա եպս. վարած է նաև Լիվոռնիոյ նուիրակութիւնը. այդ պատճառաւ 1690ին Ս. Յակոբի Միաբանութիւնը տեղւոյն իշխաններուն կը գրէ որպէսզի լաւ ընդունելութիւն ընեն անոր. տեսնել մանրամասնութիւնները (Սրգս. Ցուց. հատ. Բ. էջ 1246)։ Եղիա եպս գրած է Երուսաղէմի Պատմութիւն մը, որ կորսուած է (Նախ. էջ 70)։